Ուժանիս

Բնակչություն՝ 85

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 26 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1120 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Ուժանիսը երեք անգամ տեղահանվել է: Ուժանիսցիների նախնիները ներգաղթել են Ղարադաղից և բնակություն հաստատել Սպիտակ աղբյուր կոչվող բնակատեղում, ուր բնակվում էին սակավաթիվ տեղացիներ: 639թ-ին թշնամական հետապնդումից խուսափելու համար տեղափոխվում են “Շինատեղ” բնակատեղին, ուր այժմ էլ կան եկեղեցու ավերակներ, ապա՝ ներկայիս բնակավայրը, որտեղ 1873թ-ին եկեղեցի է կառուցվում:
Մինչև 1991թ. Ուժանիսը գտնվում էր Եղվարդի գյուղխորհրդի կազմում: 1991թ-ին տարանջատվում և կազմավորում է որպես ինքնուրույն վարչական միավոր: Գյուղի տարածքում կան գյուղատեղիներ, եկեղեցիներ և հին գերեզմանոցներ:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1434 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 433 հա, որից՝
- վարելահող՝ 205 հա, խոտհարք՝ 6 հա, արոտ՝ 110 հա, այլ հողատեսք՝112 հա
- բնակավայրերի հողեր՝ 36 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 2 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝1 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 9 հա,
- անտառային հողեր՝ 950 հա, որից անտառածածկ՝ 950 հա
- ջրային հողեր՝ 3 հա